54. ԷՇԻՆ ԱՆԳՈՒԾԻՆ ՎԸԷՍԿԵՆ

Ինըմ ա, չինըմ իրեք ախպեր, մին հա̈ր ըն ինըմ։ Ըարանց մին արտ ա ինըմ, էտ արտավըն էլ մին թա̈հրա̈վ ապըըմ ըն, յոլա յըն քյինըմ։

Ամմեն դ̇ինըմ արտը վեր կընանչըմ ա, մին ղըրըլթու կյամ ա, կոխ տամ, քյինըմ։

Հա̈րը քընենքյ ա անըմ, քընենքյ, վերչը էն մթկեն ա կյամ, վեր տըղորցը մինին ղարկի արտը, քըշերը ղարավուլ քաշին, տեսնան էտ հո՞ւ վա կյամ, արտը կոխ տամ։

Առաչի քըշերը մեծ տըղան ա քյինըմ։

Տա քըշերը քոն ա ինըմ, էլ գյուդում չի, թա հու վա արտը էլհա կոխ տըվալ։

Էրկունչի քըշերը միշնակ ախպերըն ա քյինըմ, մինչև կես քըշեր զերթում կենըմ, ամմա ետավ քոնը տանըմ ա։ Քըշերավը եր ա կենըմ, տեսնըմ արտը կոխ տված։

Իրեքինչի քըշերը պուճուր ախպերըն ա քյինըմ ղարավուլ քաշըմ։ Մինչև կես քըշեր քոն չի ինըմ, ամմա կես քըշերանը տենը քոնը տանըմ ա։

Տա մաննը կտըըմ ա, յրան աղ ածըմ, էլ ցավան նան հեռան քոնը տանըմ չի։ Տեսնըմ ա դիրիլ̇ուսին երգյինքան մին ծիյավեր եկավ, արտը սկսից կոխ տալը։

Տըղան մուտացավ էտ ծիյավերին ասից. — Տու հո՞ւ վըս, վեր մեր արտը, մեր ապրուստը իտի վըեննիտ տակըն ըս տամ, փըչըցնըմ։

էտ ծիյավերը ասից. — Լավ, վեր իտի յրս ասըմ, վեր ապրուստ չենիք, յրես քյրեզ մին սուփրա տամ, վեր պենաս, հինչ օտելի պեն օզրմ ըս, յրան ինի։

Էքյսը էտ ծիյավերը էտ սուփրան պերըմ ա, տամ էտ տըղին։ Ամմեն դոնըմ էտ տըղան պեց ա անըմ, աշխարքիս իրեսին հինչ օտելի պեն կա, տուա ա կյամ սուփրին յրան, ըտրանք օտըմ ըն, քըշտանըմ։

Մին դոնըմ էտ շենին քյոխվան կյամ ա, թա.—Պարթկըս տու։

Օզրմ ա, թա էտ սուփրան յոր օնի։ Տրանք տամ չը՞ն։ Ամմա քյոխվան զոռավ յոր ա օնըմ։ Էլհա ըտահանք սկսըմ ըն փիս ապրիլը։

Պուճուր ախպերը էլա քյինից քըշերը արտըմը կացավ, տեսավ էն ծիյավերը կյամ ա, ասից.—Ա՛յ ախպեր ծիյավեր, բա ասիլ չը՞ս, քյոխվան սուփրան զոռավ տարավ, պարթկի տեղ։

Էս դոնըմըս ծիյավերը ըտրան մին էշ տըվավ։ Էշին անգուճան օրը իրեք մանեթ փող ար եր ընգնըմ։

Էտ ընղանիքը իտի ապրըմ ին։ Մին դոնըմ էշը տարին նալբանդին կոշտը, վեր նալին։ Էտ դարըմը էշին անգուճան իրեք մանեթ ա եր ընգնըմ։ Նալբանդը վեր տա տեսնըմ ա, կոռծը կեսատ ա թողըմ, քյինըմ էտ էշին մընան մին օրիշ էշ պերըմ, նըհետը փոխըմ։

Էտ խըեզճ մարթը էշը տոն ա պերըմ, քըցըմ թավլան, ամմա էշը ուրանցը չար, էշին անգուճան իրեք մանեթ չար եր ընգնըմ։

Պուճուր ախպերը կյամ ա զաչանք անըմ, վեր էշը տան, ամմա ամաչ չի կյամ։

Իրեքինշի դոնըմը էլհա պուճուր տըղան քըշերը քյինըմ ա արտը, էտ ծիյավերին տրեսնըմ, ըտրան ամմեն հինչը նաղլ անըմ։

Էտ ծիյավերը էտ տըղին մին կացին ա տամ, անըմը Թոխմախ։ Էխ Թոխմախը էնքան թակող ա ինըմ, էնքան թակող, վեր միչև տարրն ասըմ չի «Թակիլ մի», թակիլը թարգյ չի անըմ։

Պուճուր ախպերը Թոխմախը յոր ա օնրմ, կյամ տոն, ընդրղան էլ կյամ ա քյոխվին տոնը, ասըմ. — Ա՛ քյոխվա, էշըս էլ ճարի ատ, սուփրաս էլ տու։

Քյոխվան տամ չի։

Էտ պուճուր տըղան ասըմ ա. — Թոխմախ, քյրեզ տեսնամ հա՞յ։ Թոխմախը սկսըմ ա էտ քյոխվին մին լավ թակիլը։ Էնքան թակըմ ա, վեր քյոխվան օզրմ ա, թա մըեռնի։

Ասըմ ա. — Ա՛ բալա, սուփրատ էն ա սանդուղումըս, քյինի եր կալ, մինակ ինձ պեց թող։

Էտ տըղան սուփրան յոր ա օնրմ, ըտրղան քյինըմ նալբանդին կոշտը, ըտրան էլ ըտեղ էն Թոխմախավը մին լավ կյոսռըմ։

Նալբանդրն ասում ա.—Թակել մի։ Էշը էն ա կյումումը, քյինա եր կալ, մինակ ինձ ազադի, ինձ քյըզանա ջամբար ըրա, մեխկ ըմ, խեղճ ըմ, խուխատար ըմ։

Էտ տըղան էշը նան սուփրան յոր ա օնըմ, կյամ տոն։ Ըտրանա ետը իրեք ախպերավ, ուրանց հորը նան մորը քըշտին օրախ ապըրմ ըն, Հալա միչև օրըս էտ էշը անգուճան օրը իրեք մանեթ ա վեր քըցում ըտրանց հետի, սուփրան էլ ամմեն հինչը, ամմեն ուտելի պեն։